



Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի նախագահ
Արա Զոհրաբյանի 01.09.2016թ. թիվ 386-Լ որոշմամբ

* * * * *

Կ Ա Ր Գ

«35 ՓԱՍՏԱԲԱՆԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգն ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 13-րդ հոդվածի ութերորդ մասի պահանջին համապատասխան և սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կողմից Ռայմոն Եզեգեյանից (**այսուհետ՝ Բարերար**) տրամադրվող նվիրաբերության գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները:
2. «Ռայմոն Եզեգեյան» թոշակի շահառու է համարվում սույն կարգին համապատասխան որոշված փաստաբանը (**այսուհետ՝ Շահառու**):
3. Շահառուների քանակը չի կարող գերազանցել 35-ը (երեսունհինգը) (**այսուհետ՝ Շահառուների քանակ**):
4. «Ռայմոն Եզեգեյան» թոշակը նախատեսում է մեկ Շահառուի համար մեկ տարվա անդամավճարի վճարում, որպես՝ կանխավճար:

* * *

II. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Շահառուներին որոշելու համար ձևավորվում է ժամանակավոր հանձնաժողով (**այսուհետ՝ Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
 - Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար,
 - Պալատի գանձապահ,
 - Բարերարի ներկայացուցիչ:

6. Հանձնաժողովը՝

- ստուգում է Շահառուների թեկնածուների համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.
- հաստատում է Շահառուների ցանկը և ներկայացնում է Պալատի ֆինանսական տնօրենին:

7. Շահառուներին որոշելու համար Հանձնաժողովն՝ ըստ ստորև նշված առաջնահերթության, նախապատվությունը տալիս է ստորև նշված պահանջներին համապատասխանող փաստաբաններին.

7.1. 2016 թվականի ապրիլի 2-ից 5-ն ընկած ժամանակահատվածում քաղաքացիական խաղաղ բնակչության, ինչպես նաև ԼՂՀ պաշտպանության բանակի զինծառայողների նկատմամբ ադրբեջանական զինվորների կողմից հարձակումների և անմարդկային վերաբերմունքի (խոշտանգումների) դեպքերից հետո կամավորների պաշտպանական գործողություններին մասնակցած փաստաբաններ **(5 (հինգ) փաստաբան (5-ից ավել դիմում ներկայացվելու դեպքում, փաստաբանների թիվը կարող է ավելացվել))**.

7.2. 2015 թվականի հունիսին էլեկտրաէներգիայի թանկացման կապակցությամբ Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում քաղաքացիների կողմից իրականացրած նստացույցի մասնակիցներին անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով Փաստաբանների պալատի նախաձեռնությամբ կամավոր ներգրավված **ոչ ավել, քան 15 (տասնհինգ) փաստաբան**: Այս խմբում նախապատվությունը տրվում է քանակով ավել իրավաբանական օգնություն ցուցաբերած փաստաբաններին.

7.3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնահարցի միջազգային-իրավական ասպեկտները հետազոտող Փաստաբանների պալատի փորձագիտական խմբում ներգրավված **ոչ ավել, քան 15 (տասնհինգ) փաստաբան** : Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել ակտիվություն ցուցաբերած փաստաբաններին:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված խմբերում Շահառուների տեղերի ավելացման դեպքում, այդ տեղերը պետք է բաշխվեն մյուս խմբում՝ ըստ խմբում շահառուի գրանցման՝ սույն կարգով սահմանված առաջնահերթության: Տարբեր խմբերի պահանջներին բավարարող փաստաբանը կարող է Շահառու հանդիսանալ միայն մեկ խմբի համար:

9. Շահառու կարող է լինել սույն կարգի 7-րդ կետով սահմանված խմբերի պահանջներին բավարարող այն փաստաբանը, ով **մինչև 2016 թվականի սեպտեմբերի 12-ը (ներառյալ)** դիմել է Հանձնաժողովին և

Հանձնաժողովի կողմից ընդգրկվել Շահառուների ցուցակում:

10. Շահառու չի կարող լինել այն փաստաբանը, ով՝
 - 10.1. ունի անդամավճարի չմարված պարտավորություն.
 - 10.2. 2015 կամ 2016 թվականներին ընդգրկվել է Բարերարի սահմանած նվիրաբերության այլ շահառուների ցանկում.
 - 10.3. հանդիսանում է Փաստաբանների պալատի աշխատակից կամ մարմնի անդամ:
11. Շահառու հանդիսացող փաստաբանի արտոնագիրը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ կասեցման կամ դադարեցման պահին չմարված կանխավճարի չսպառված մնացորդը փոխանցվում է սույն կարգին համապատասխան որոշված մյուս փաստաբանին: Սույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ Շահառու հանդիսացող փաստաբանը անդամավճարից լրիվ կամ մասնակի ազատվելու արտոնություն է ձեռք բերում:
12. Շահառուների ցուցակի հիման վրա Շահառուին հանձնվում է **«փաստաբան Եզեգեյանի 2016 թվականի թոշակ»** անվան ակարգով հավաստագիր:

* * *

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 1-ից:
14. Հանձնաժողովը սույն կարգի համաձայն հաշվարկ կատարելու ժամանակ կոտորակային միավորներ ստանալու դեպքում դրանք կարող է կլորացնել:
15. Սույն կարգով նախատեսված Շահառուների ցուցակը պետք է ներկայացվի մինչև 2016 թվականի սեպտեմբերի 20-ը:
16. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել Պալատի նախագահի որոշմամբ:

* * *